Կազմված է 06.05.2016թ.
բաղկացած է 12 թերթից
Տպագրված է ընդամենը 2 օրինակ

ՕՐԻՆԱԿ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Կենսաթոշակային համակարգի
իրազեկման կենտրոն» հիմնադրամի
Հոգաբարձուների խորհրդի նիստի
2016 թ. մայիսի 10-ի
թիվ 13 արձանագրությամբ

հիմնադրամի գործադիր տնօրենի
ժ/պ՝

_____ Պ. Պետրոսյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 26.09.2011 թ.
գրանցման թիվ 222.160.47002
հարկ վճարողի հաշվառման համար
02602449
26.09.2011թ. գրանցված կանոնադրության
թիվ 001.2 փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կողմից

"20" 05 2016թ.

Պետական ռեգիստրի ղեկավար՝

_____ Կ. Աղամյան

«ՆՈՐՔ» ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(Նոր խմբագրություն)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը (նախկին անվանումը՝ «Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն» հիմնադրամ, ստեղծված ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 28-ի N 1059-Ն որոմամբ), այսուհետ՝ Հիմնադրամ, հիմնադրի կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հետապնդում է սոցիալական, գիտական, կրթական և այլ հանրօգուտ նպատակներ:

2. Հիմնադրամի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության: Հիմնադրի և հիմնադրամի միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

3. Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում իր հիմնադրի պարտավորությունների, իսկ հիմնադիրը՝ հիմնադրամի պարտավորությունների համար:

4. Հիմնադրամն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

5. Հիմնադրամի շահառուներն են՝ Հայաստանի Հանրապետությունը (ի դեմս Հայաստանի Հանրապետության սոցիալական պաշտպանության և սոցիալական աջակցության բնագավառներում պետական կառավարում իրականացնող մարմինների), Հայաստանի Հանրապետությունում գործող տնտեսավարող սուբյեկտները, վարձու աշխատողները, ուսանողները, կենսաթոշակառուները, շահագրգիռ ցանկացած անձ:

6. Հիմնադրամի անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ»,

2) հայերեն կրճատ՝ « «Նորք» կենտրոն»,

3) անգլերեն լրիվ՝ " "Nork" Social Services Technology and Awareness Center" Fund",

4) անգլերեն կրճատ՝" "Nork" Center",

5) ռուսերեն լրիվ՝ "Фонд "Информационно-технологический центр социальных услуг "Норк" ",

6) ռուսերեն կրճատ՝ "Центр "Норк"":

7. Հիմնադրամն ունի հայերենով, անգլերենով և ռուսերենով՝ իր անվանմամբ կլոր կնիք:

8. Հիմնադրամն ունի իր անվանմամբ դրոշմներ և ձևաթղթեր, ինչպես նաև անհատականացման այլ միջոցներ:

9. Հիմնադրամի իրավունակությունը ծագում է նրա պետական գրանցման պահից և դադարում նրա լուծարմամբ:

10. Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Կ.Ուլնեցի 68:

11. Հիմնադրամի գործունեության ժամկետը չի սահմանափակվում:

II. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

12. Հիմնադրամի գործունեության նպատակներն են.

1) սոցիալական ապահովության բնագավառի տեղեկատվական ենթակառուցվածքի բնականոն գործունեությունը և շարունակական արդիականացումն ու կատարելագործումը, այս նպատակով մասնավոր և պետական հատվածների արդյունավետ համագործակցությունն ապահովելը,

2) սոցիալական ապահովության բնագավառում էլեկտրոնային սոցիալական ծառայությունների ներդրումը և այդ ծառայությունների շրջանակի ընդլայնումը (այդ թվում՝ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ), այս նպատակով մասնավոր և պետական հատվածների արդյունավետ համագործակցությունն ապահովելը,

3) սոցիալական ապահովության բնագավառի և կուտակային կենսաթոշակային համակարգի վերաբերյալ հանրային իրազեկվածության և հանրային կրթության մակարդակի բարձրացումը, այս նպատակով մասնավոր և պետական հատվածների արդյունավետ համագործակցությունն ապահովելը,

4) Հայաստանի Հանրապետությունում սոցիալական ապահովության բնագավառում կիրառվող տեխնոլոգիական լուծումների արտահանումը,

5) Սոցիալական պաշտպանության ոլորտի բարեփոխումներին աջակցելը,

6) սոցիալական ապահովության բնագավառում կիրառվող տեխնոլոգիական լուծումների միջազգային փորձի ուսումնասիրությունը և տեղայնացումը:

13. Իր առջև դրված նպատակներն իրագործելու համար Հիմնադրամը իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով և դեպքերում ստեղծել, ձևավորել, վարել և շահագործել սոցիալական ապահովության բնագավառի տեղեկատվական համակարգերը,

2) սոցիալական ոլորտում համակարգչային և ցանցային սարքավորումների ու տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ներդրում, շահագործում և սպասարկում,

3) Սոցիալական ոլորտի տեղեկատվական հոսքերի նախագծում, ձևավորում և դրանց կառավարում, ինչպես նաև սոցիալական ոլորտի միասնական տեղեկատվական ենթակառուցվածքի ձևավորման շրջանակներում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կառուցվածքային, առանձնացված ստորաբաժանումներում և ենթակայությամբ գործող ՊՈԱԿ-ներում իրականացվող SS աշխատանքների համակարգում,

4) սոցիալական ոլորտի տեղեկատվական ապահովվածության նպատակով ցուցանիշների հավաքագրման և վերլուծությունների իրականացման համար անհրաժեշտ հաշվետվային և հաշվառման ձևաչափերի ներդրում, դրանց ձևավորման գործընթացի ավտոմատացում, այդ ձևաչափերին համապատասխան հաշվետվությունների ստացում,

5) սոցիալական ոլորտի գործունեության գնահատման համար տեղեկատվական հենքի ապահովում, ցուցանիշների հավաքագրում, կուտակում և փոխկապակցված օգտագործում,

6) բնակչության սոցիալական վիճակի ուսումնասիրությունների և հետազոտությունների անցկացման, սոցիալական խնդիրների, ծրագրերի, ծառայությունների և ռեսուրսների մոնիթորինգի իրականացման տեղեկատվական հենքի ապահովում և մասնակցություն այդ աշխատանքներին,

7) տեղեկատվական համակարգերի զարգացման ծրագրերի մշակում, դրանց ներդրում ու գնահատում,

8) սոցիալական ոլորտի հիմնարկների և կազմակերպությունների տեղեկատվական հաշվետվությունների հավաքագրում, ամփոփում և սահմանված կարգով պետական վիճակագրական հաշվետվությունների կազմում ու ներկայացում,

9) մասնակցություն վիճակագրական ցուցանիշների, դասակարգիչների, ստանդարտների մշակման և միջազգային չափանիշներին համապատասխանեցման աշխատանքներին,

10) հրատարակչական գործունեության իրականացում, դրա համար անհրաժեշտ նյութերի պատրաստում (ամսագրեր, զեկուցագրեր, տեղեկատվական նյութեր, տեղեկատուներ, գիտաուսումնամեթոդական գրականություն և այլն),

11) սոցիալական ոլորտի կազմակերպություններին և շահագրգիռ այլ կազմակերպություններին օրենսդրությամբ սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկատվության և վիճակագրական տվյալների տրամադրում,

12) սոցիալական ոլորտի տեղեկատվական համակարգերի նախագծման, ստեղծման, ներդրման և կառավարման միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրություն, տեղայնացում և կիրառման ապահովում,

13) սոցիալական ոլորտի տեղեկատվության էլեկտրոնային փոխանցման, փոխանակման, էլեկտրոնային փոստի և միջազգային էլեկտրոնային ցանցերի հետ կապի ապահովում: Նախարարության, առանձնացված ստորաբաժանումների ու ենթակայությամբ գործող ՊՈԱԿ-ների պաշտոնական վեբկայքերի նախագծում, ստեղծում և հետագա սպասարկում,

14) սոցիալական ոլորտում տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային սարքավորումների մասնագետների պատրաստման, վերապատրաստման դասընթացների կազմակերպում և իրականացում,

15) համակարգչային սարքավորումների տիրապետման և առանձին ծրագրերի ուսուցման դասընթացների կազմակերպում,

16) նպաստել Հայաստանի Հանրապետության սոցիալական պաշտպանության, սոցիալական աջակցության համակարգերի և կուտակային կենսաթոշակային համակարգի միջոցով շահառուներին տրամադրվող ծառայությունների վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացմանը,

17) տրամադրել խորհրդատվական և մասնագիտական աջակցություն, այդ թվում՝ առցանց գործիքների կիրառմամբ,

18) մշակել, հրատարակել և տարածել տեղեկատվական և ուսուցողական նյութեր,

19) կազմակերպել ուսուցողական և տեղեկատվական դասընթացներ,

20) վարել Հայաստանի Հանրապետության միասնական սոցիալական պորտալը, որը պետք է նպաստի նաև կուտակային կենսաթոշակային համակարգի վերաբերյալ տեղեկատվության և ֆինանսական գիտելիքի տարածմանը,

21) ապահովել «114 սոցիալական թեժ գիծ» ծառայության բնականոն գործունեությունը,

22) մշակել և իրականացնել հանրային ուսուցման ծրագրեր,

23) կազմակերպել սոցիալական ոլորտի բարեփոխումների և կուտակային կենսաթոշակային համակարգի վերաբերյալ հանրային քննարկումներ,

24) տեխնիկական աջակցություն ցուցաբերել գործատուներին՝ անձնավորված հաշվետվությունները ներկայացնելու գործընթացի հետ կապված կիրառական հմտություններ ձեռք բերելու համար,

25) աջակցել պետություն-մասնավոր հատված համագործակցության միջոցով ներդրումային ծրագրերի իրականացմանը,

26) իրականացնել հետազոտություններ, գիտահետազոտական ծրագրեր կամ աջակցել դրանց իրագործմանը,

27) ուսումնական հաստատություններում իրականացնել ուսուցման և վերապատրաստման ծրագրեր,

28) իրականացնել հանրային կարծիքի ուսումնասիրություններ,

29) իրականացնել ծրագրերի, միջոցառումների արդյունավետության գնահատման մշտադիտարկում (մոնիտորինգ),

30) կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծրագրերի շրջանակում համագործակցել պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր և պետական մասնակցությամբ ընկերությունների, դոնոր կազմակերպությունների և այլ շահագրգիռ անձանց հետ,

31) համագործակցել միջազգային կազմակերպությունների, այլ պետությունների շահագրգիռ կառույցների հետ:

14. Հիմնադրամը կարող է իրականացնել օրենքով և այլ իրավական ակտերով չարգելված ցանկացած տնտեսական գործունեություն:

15. Օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված գործունեության առանձին տեսակներով Հիմնադրամը կարող է զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից կամ դրանում նշված ժամկետում:

III. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՒՅՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ, ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

16. Հիմնադրամի սկզբնական գույքը ձևավորվում է հիմնադրի կողմից հիմնադրամին փոխանցված գույքից:

17. Հիմնադրի՝ հիմնադրամին հանձնած գույքը հիմնադրամի սեփականությունն է:

18. Հիմնադրամն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա բանկերում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկային և այլ հաշիվներ բացելու իրավունք՝ Հայաստանի Հանրապետության արժույթով և արտարժույթով:

19. Հիմնադրամը կարող է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել միայն այն դեպքում, երբ այն ծառայում է իր կանոնադրական նպատակներին: Ձեռ-